

ՀՏԴ 78.07:78.03

Արվեստ

Զարար ՔԷՇԻՇԵԱՆ

## ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ՝ ՄԻՆՉԵՒ ԿՈՄԻՏԱՍ

(ուսումնասիրում՝ «Գալուստ Կիլպենկեան»  
հաստատության դրամաշնորհով)

Նորուածին մէջ քննուած են հայ մանկապատանեկան խմբերգային երաժշտութեան ակունքները: Կարա-Մուրզայի շնորհիւ խմբերգային արուեստը սկսաւ տարածում գտնել հայ իրականութեան մէջ: Նա իր գործունէութիւնը ծաւալած է շրջաններու մէջ, մինչդէռ Մակար Եկմալեան, Գրիգոր Սյունի, Ստեփան Դեմուրեան եւ Կոմիտաս կեդրոնացած էին քաղաքի մը մէջ՝ նկատառելի մակարդակի հասցնելով հայ երգչախմբային կեանքը:

*Բանալի բառեր՝ Գրիգոր Սյունի, երգչախումբ, խմբերգ, Կոմիտաս, Մակար Եկմալեան, Ստեփան Դեմուրեան*

### 3. Кешишян

В статье исследуются истоки армянской детской хоровой музыки. Благодаря Кара-Мурзе в армянской действительности стало распространяться хоровое искусство. В то время как Макар Екмалян, Григор Сюни, Степан Демуриан и Комитас были сосредоточены в одном городе, он работал в регионах, подводя армянскую хоровую жизнь до значительного уровня.

*Ключевые слова:* Григор Сюни, хор, хоровое пение, Комитас, Макар Экмалян, Степан Демуриан

### Z. Keshishyan

The article examines the origins of Armenian children's choral music. Thanks to Kara-Murza, choral art began to spread in Armenian reality. While Makar Yekmalyan, Grigor Syuni, Stepan Demurian and Komitas were concentrated in one city, he worked in the regions, bringing the Armenian choral life to a significant level.

*Key words:* Grigor Syuni, choir, choral singing, Komitas, Makar Ekmalyan, Stepan Demurian

Հայ մանկապատանեկան խմբերգային երաժշտության ակունքները սերտելու համար պիտի սկսինք 1885 թուականի Մարտի 15-էն, երբ Քրիստափոր Կարա-Մուրզա (1853-1902), հայ իրականութեան մէջ առաջին անգամ ըլլալով, 15 երգիչներով Թիֆլիսի մէջ ստեղծեց բազմաձայն երգչախումբ, որ կարելոր իրադարձութիւն եղաւ հայ մշակութային կեանքին մէջ: Կարա-Մուրզա, իր համերգային կեանքի 17 տարիներուն ընթացքին 50-է աւելի քաղաքներու մէջ շուրջ 90 երգչախումբեր ստեղծելով, քանի մը հարիւրի հասնող համերգներով ոչ միայն սկիզբ դրաւ հայոց բազմաձայն երգչախմբային արուեստին, այլեւ, մեծ հետաքրքրութիւն առաջ բերելով՝ ստեղծեց համապատասխան երաժշտական մթնոլորտ, որու շնորհիւ, յետագային, բնականաբար պիտի մտածուէր երիտասարդականին կողքին ու անոր իբրեւ հիմք՝ մանկապատանեկան խմբերգային ասպարեզին ալ մասին:

Մինչեւ իր ժամանակաշրջանը հայ իրականութեան մէջ երգչախմբային կեանքի ձեւաւորուած աւանդութիւններու բացակայութեան պատճառով, բնականաբար, Կարա-Մուրզա շատ մեծ դժուարութիւններ դիմագրաւած է երգեցիկ կազմերու հաւաքագրման ու անդամական կայուն կազմեր ունենալու իր առաքելութեան մէջ: Այդ է պատճառը, որ առաւելաբար երիտասարդ ու երէց պատանի հայորդիներու վրայ դրած է իր գրաւը: Կարա-Մուրզայի եւ իր ժամանակաշրջանի երգչախումբերուն մէջ միշտ ալ կային պատանիներ, որոնք կ'երգէին սովորաբար եւ այլթո ձայնաբաժիններուն մէջ, որքան ալ անորմէ պահպանուած երաժշտական նիւթերուն մէջ պատանիներու յատուկ երգեր մնացած չըլլային: Վստահաբար, սիրային բնոյթի խմբերգերէն անկախ, հայրենասիրական ու բնութիւն փառաբանող ժողովրդային երգերու մշակումներուն («Լորիկ», «Ջան գիւլում», «Լեպիո, լէ, լէ», «Օիծեռնակ», «Գացի արտեր բռնի լոր», «Կիլիկա», «Եղբայր եմք մեք») ու անոնց համերգային կատարումներուն մէջ պատանիներ մասնակցութեան բաժին կունենային:

Անշուշտ Կարա-Մուրզա եւ յետագային իր յաջորդները դիմագրաւեցին բազմապիսի դժուարութիւններ բազմաձայնութիւնը հայ իրականութեան մէջ ընդունելի դարձնելու համար, սակայն, անոր յաղթանակը շրջադարձային նշանակութիւն ունեցաւ հայ երաժշտութեան պատմութեան մէջ, արհեստավարժ երաժշտական կեանքին մէջ ու նոր հեռանկարներու եւ իրագործումներու ճամբայ յարթեց:

Կարա-Մուրզա մեծ դերակատարութիւն ունեցաւ նաեւ երիտասարդ խմբավարներու պատրաստման արդէն անյետաձգելի գործին մէջ: Թիֆլիսի մէջ կարճատեւ դասընթացքներու ճամբով ուսած ու իրենց կայացման ճանապարհը անցնելու համար պարարտ հող գտած խմբավարները զգալի աշխատանք կատարեցին խմբերգային երգեցողութեան տարածման ուղղութեամբ: Իր

տիտանական գործունեության մասին ան յետագային կը գրէ. «Քսան տարուայ աշխատութեանս վերջին տասը տարին Կովկասում, զանազան ընտանեկան, հասարակական եւ բեմական միջոցներով գաղափարներս արծարծելս ի զուր չգնացին: Քառաձայն երգեցողութիւնը յաղթութիւնը լիապէս տարաւ: Ես վարձատրուած եմ եւ հիմա հրաւիրում եմ շարունակել ով կամի ինձ հետ, կամ առանձին՝ միեւնոյնն է: Ռամիկը ինձնից շնորհակալ է: Պահպանողական կուսակցութիւնը միայն ճնշում գործեց եւ վեհափառը, երկու հակասական կարծիքներ յայտնելով, Էջմիածնում գործը դադարեցրեց: Բայց քառաձայնը ամէն տեղ դուրս է մղում միաձայն երգը: Այդ արդէն ուրախալի է» ( Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի նիւթերէն):

Ահաւասիկ, Կարա-Մուրզայի նշած յաղթանակին շնորհիւ է, որ խմբերգային արուեստը սկսաւ տարածում գտնել հայ իրականութեան մէջ եւ յետագային ծնունդ տուաւ նաեւ մանկապատանեկան երգչախումբերու եւ համապատասխան խմբերգերու գոյութեան:

Եթէ Կարա-Մուրզա իր խմբերգային գործունեութիւնը ծաւալած է ընդգրկելով քաղաքներու ու շրջաններու լայն աշխարհագրութիւն մը, այլ երաժիշտներ, ինչպէս Մակար Եկմալեան, Գրիգոր Միւնի, Ստեփան Դեմուրեան եւ Կոմիտաս, կեդրոնացած ըլլալով տուեալ քաղաքի մը մէջ, առաւել հիմնական ու մնայուն աշխատանքի հնարաւորութեամբ, նկատառելի մակարդակի բարձրացոյցին ընդհանրապէս հայ երգչախմբային կեանքը, որու ծիրէն ներս՝ աշակերտական-մանկապատանեկան մարզը եւս:

Ի տարբերութիւն, օրինակ, Կարա-Մուրզային, այլ է պարագան Մակար Եկմալեանին, որ թէ՛ Էջմիածնի Գեորգեան հոգեւոր ճեմարանին, եւ այնուհետեւ, թէ՛ Թիֆլիսի նշանաւոր Ներսիսեան վարժարանին մէջ, իր ստեղծարար կեանքին մէկ կարեւոր մասը յատկացուցած է աշակերտական-պատանեկան երգչախումբերու կազմութեան ու համերգային-բեմական կեանքին:

Մակար Եկմալեանէն նոյնպէս յատկապէս մանուկներու ու պատանիներու համար յօրինումներ ու մշակումներ մեզի չեն մնացած, սակայն, հետեւեալ երգերէն շատերը, ինչպէս՝ «Ճախարակ», «Անձրեւն եկաւ», «Արագը հեշտացել ա», «Ահա ծագեց կարմիր արեւ», «Ջարթիր, արդեակ», «Կիլիկիա», «Պլպուլն Աւարայրի», «Տէր, կեցոյ դու գուհայս», «Ով, Հայոց աշխարհ», «Ձայնը հնչեց Էրզրումէն», «Կեցցէ՛, Զէյթուն», որոնք կը պատկանին իր յօրինումներուն ու մշակումներուն, առատօրէն տեղ գտած են նախ Գեորգեան ճեմարանի ու ապա՝ Ներսիսեան վարժարանի աշակերտական երգչախումբերու համերգային երգացանկերուն մէջ:

Միւս կողմէ, Գրիգոր Միւնի պատմական նշանակութեան երգչախումբ ստեղծած ու ղեկավարած է Շուշիի մէջ: Քառաձայն խառն երգչախումբին

կողքին, իր ժամանակին մեջ ուշագրաւ նորութիւն եղած է անոր աշակերտական երգչախումբին կազմութիւնը՝ Շուշիի նշանաւոր Թեմական վարժարանին մէջ: Գրիգոր Սիւնիի իրագործած մանկապատանեկան երգչախմբային երգացանկերէն նոյնպէս նմոյշներ չեն պահպանուած: Շուշիի մէջ երգչախմբային արուեստի յառաջամարտիկներէն է նաեւ Ստեփան Թեմուրեանը, որ իր հերթին, նկատառելի աշխատանք տարած է տուեալ մարզին մէջ:

Արդէն իսկ դասականացած մանկապատանեկան խմբերգերու շարք մը մեզի հասած է Կոմիտասէն: «Գուսան» բազմանդամ երգչախումբի ծանրաբեռնուած աշխատանքին զուգահեռ, Կոստանդնուպոլսոյ մէջ, Կոմիտաս ժամանակ տրամադրած է նաեւ մանկապատանեկան երգչախմբային կեանք ստեղծելուն, յատկապէս «Նիկողոսեան» վարժարանին մէջ՝ 1914-ին: Դասաւանդման զուգահեռ, Կոմիտաս առաջին իսկ պահէն սկսեալ, շաբաթական երկու ժամուայ փորձերով 6-8 տարեկան մանուկներով կազմած է դպրոցական երկձայն երգչախումբ: Վստահաբար ան նպատակ ունեցած է փոքր տարիքէն մանուկ ու պատանի հայորդիները հաւաքագրել ու ընտելացնել, Պոլսոյ հայութեան համար ցարդ տեղւոյն տիրացուական «Ալաթուրքա» ինքնագործ խումբերու մակարդակէն վեր գտնուող հայեցի բազմաձայն երգեցողութեան:

«Նիկողոսեան» վարժարանի երգչախումբին երգերը շուտով մեծ տարածում ունեցած են Պոլսոյ կեդրոնական թէ թաղային վարժարաններուն մէջ ու հայութեան մէջ ստեղծած են աննախադէպ հետաքրքրութիւն՝ երգչախմբային ասպարեզին նկատմամբ:

Անձնապէս մանկապատանեկան երգչախումբ ստեղծելուն ու ղեկավարելուն հետ միաժամանակ Կոմիտաս, հեռանկարային ծրագրաւորումով, իր Պոլսահայ հիմնական սաներուն՝ Բարսեղ Կանաչեանին, Միհրան Թումաճեանին, Վարդան Սարգսեանին, Վաղարշակ Սրուանձտեանին, Հայկ Սէմերճեանին, Արտաշէս Ապաճեանին, Արմենակ Շահմուրատեանին, եւ առաւելաբար արեւելահայ իրականութեան մէջ գործող Սպիրիտոն Մելիքեանին ներշնչած, պատրաստած ու մղած է Պոլսահայ գաղութի տարբեր վարժարաններուն մէջ լծուիլ աշակերտական երգչախումբեր ստեղծելու ու ղեկավարելու առաքելութեան: Անոնք բոլորն ալ իրենց փորձնական – մանկավարժական դասերն ու աւարտական քննութիւնները կատարած են՝ այդ վարժարաններու աշակերտութեան ու մանկապարտեզներու մանուկներուն դասեր տալով ու անոնց կարողութիւններուն համապատասխան մշակումներ ու յօրինումներ ընելով: Դժբախտաբար, անոնց մշակումներն ու յօրինումները չեն պահպանուած:

1913-ին, Մարգարիտ Բաբաեանին գրած իր նամակին մէջ Կոմիտաս կը գրէ. «Առաջին խումբ աշակերտներս հասան եւ վարժարանների մէջ դասատու են եւ

շատ գոհ են թողել բոլորին ...»: Արդեն կարելի է պատկերացնել, թե ինչպիսի մանկապատանեկան երգչախմբային բազմաբեղուն կեանք ու առողջ մթնոլորտ ստեղծուած է Կոստանդնուպոլսոյ մէջ՝ շնորհիւ Կոմիտասի ու իր սաներու նպատակասլաց աշխատանքին:

Մինչ Քրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալեանի ու իրենց ժամանակակիցներու, յատկապէս մանկապատանեկան կազմերու համար յօրինած խմբերգերու մասին երաժշտագիտական լուրջ վերլուծումի հնարաւորութիւններէն զուրկ ենք, առաւելաբար անոնց ստեղծագործական թողոյնին մէջ համապատասխան կազմերու համար յօրինումներու կամ մշակումներու բացակայութեան պատճառով, առանձնակի շեշտադրումով կարող ենք անդրադառնալ Կոմիտասի մանկապատանեկան ժառանգութեան:

Հոգեւորականի, երաժշտահանի, ազգագրագէտի, մեներգչի, խմբավարի, երգ ու բանահաւաքի, տեսաբանի, երաժշտական կեանքի կազմակերպիչի եւ այլ հմտութիւններու տէր անձնաւորութիւն ըլլալուն զուգահեռ, ըլլալով նաեւ մեծ մանկավարժ, Կոմիտաս, դպրոցականներու գեղարուեստական դաստիարակութեան հարցերը միշտ իր ուշադրութեան առարկան դարձուցած է: Իրմէ մեզի հասած ժառանգութեան մէջ բարեբախտաբար պահպանուած են 20 խմբերգեր, որոնք դպրոցական կամ մանկապատանեկան սիրողական, եւ քանի մը հատն ալ, իրենց կատարողական բարդութեան առումով արհեստավարժ մանկապատանեկան երգչախումբերու համար մշակուած են:

Փարիզի «Անահիտ» հանդէսին մէջ տպագրած իր յօդուծներէն մէկուն մէջ Կոմիտաս կը գրէ. «Բազմաձայն երաժշտութիւնը ոչ պէ գանազան ձայների ծեփ է, այլ ստեղծագործութիւն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել բազմաձայնութիւն, հային յատուկ ոճ ու ոգի, ապա յետոյ ընդհանրացման մասին մտածել, որովհետեւ երաժշտութիւնն էլ, լեզուի պէս, ունի իր քերականական օրենքները, որոնք զանազան են տարբեր ազգերի համար: Ահաւասիկ այս մեկնակէտն է, որ ան կ'առաջնորդուի նաեւ իր մանկապատանեկան երգերու խմբերգագրութեան մէջ: Անոնք, չնչին բացառութիւններով, բնաւ չեն առաջնորդուիր եւրոպական ներդաշնակութեան կարգ ու կանոնով, այլեւ, ինչպէս կ'երեւին. 1. «Անձեւ եկաւ», 2. «Ջան գառնուկ» եւ 3. «Էսօր ուրբաթ» նոթային օրինակներուն մէջ, մայր մեղեդիին զուգակցող իւրաքանչիւր ենթաձայն, մեղեդիէն բոլորով բազմաձայնային (Polyphonic) յօրինումով մը ինքնուրոյնաբար կը կառուցէ խմբերգին բազմաձայնութիւնը, այսպիսով ընդգծելով կոմիտասեան ոճին առանձնայատկութիւնը: Անոնցմէ քանի մը հատն ալ, ինչպէս նօթային օրինակներ, 4. «Ես լսեցի մի անուշ ձայն», 5. «Մայրենի լեզու», սկսնակ երգչախումբերու կատարողական հնարաւորութիւններուն նպաստելու միտումով, մշակուած են եւրոպական ներդաշնակագիտութեան

մտածողությամբ: Պետք է մատնաշնել, որ կոմիտասեան խմբերգային մանկագրութիւնը ամբողջությամբ կը յենի նոյն խմբերգերու իր բազմաձայն խառն երգչախումբերու համար մշակումներուն պարզացումներուն: Պարզացումներ, որոնք իրենց ամբողջականութենէն քիչ բան կը զիջին, որովհետեւ կատարուած են մեծ վարպետութեամբ ու անոնց մեղեդային ենթաձայներէն ներբերուած են կարեւորագոյն ու ամենէն բնորոշիչ մասերը:

Կոմիտասեան քսան այս խմբերգերը ինքնաբերաբար կը բնութագրեն այն օրերուն հայկական դպրոցներուն մէջ ուսուցանուող երգերն ու մթնոլորտը: Հայոց լեզուին նուիրուած երկու երգեր ( «Ո՛վ մեծասքանչ դու լեզու»՝ յօրինուած հայոց գիրերու գիւտին 1500–ամեակին, «Մայրենի լեզու»,) 7–րդ դարու յեղինակ Կոմիտաս Աղցեցիի «Անձինք նուիրեալք» շարականը՝ նուիրուած Հոփսիսիմեանց կոյսերուն, եւ 17 գեղջկական երգերու մշակումներ, որոնց մէջ կատակերգեր ( «Գնացէք տեսէք ո՛վ է կերել այծը», «Զան գառնուկ») եւ քնարաշունչ երգեր «Լուսնակն անոյշ», «Ախ, Մարալ ջան», «Ալագեագ» եւ այլն), որոնք այլապէս ալ ունին իրենց քառաձայն խառն խմբերգային տարբերակները:

Կոմիտաս իր մանկապատանեկան խմբերգերն ու ժողովրդային երգերու համապատասխան կազմերու երկձայն ու եռաձայն մշակումները անձնապէս իր խմբավարութեամբ կատարած է նախ Էջմիածնի Գեորգեան ճեմարանի սանուց երգչախումբով ու այնուհետեւ, Պոլսոյ դպրոցներու աշակերտական երգչախումբերով: Ամենայն հաւանականութեամբ, ան իր խմբերգերը յատկացուցած է նաեւ նոյն օրերուն Պոլսահայ դպրոցներու երգեցողութեան ուսուցիչ իր սաներուն: Ուշագրաւ է, որ հայկական երաժշտագագացողութիւնը փոքր տարիքէն իսկ դեռատի սերունդին մէջ ներծծուն դարձնելու միտումով, ան առաւելաբար ժողովրդական երգերու մշակման եւ ուսուցման շեշտադրումով առաջնորդուած է: Այսպիսով, կրնանք ընդհանուր պատկերացում մը ունենալ նաեւ, որ պատմականօրէն ինչպիսի երգերով՝ ինչպիսի կատարողական որակ ունեցած են հայ մանկապատանեկան անդրանիկ երգչախումբերը:

Կոմիտասի մանկապատանեկան խմբերգերը բազմիցս հրատարակուել են տարբեր ժողովածուներու մէջ, սակայն, իր ծննդեան 145–ամեակին առիթով ի մի հաւաքուած ու 2014–ին, փրոֆ. Դաւիթ Ղազարեանի մասնագիտական խմբագրութեամբ մէկ երդիքի տակ հաւաքուած են «Մանկական խմբերգեր» վերնագրով ժողովածուին մէջ: Ինչպէս իր նախաբանին մէջ Դաւիթ Ղազարեան կը գրէ. «Երգչախմբային արուեստը ժամանակի կենդանի տարեգրութիւնն է, այն պատմութեան եւ ժողովուրդի ձայնն է, որն արտացոլում է ժողովուրդի ազգային ինքնագիտակցութիւնը, նրա հոգեւոր կեանքը: Կոմիտասը հանճարեղ արուեստագէտի եւ գիտնականի խորաթափանցութեամբ ընդունեց բազմաձայնութեան նշանակութիւնը հայ ազգային երաժշտութեան ձեւաւորման

մէջ, եւ իրաւամբ համարում է հայ բազմաձայն երաժշտական արուեստի հիմնադիրը»:

Աներկբայօրէն ու անվարան կարելի է հաստատել, որ Կոմիտաս իրաւամբ կը համարուի նաեւ հայ արհեստավարժ մանկապատանեկան խմբերգային արուեստի հիմնադիրը, եւ փաստօրէն, իր 20 մանկապատանեկան խմբերգերը այս մարզի առաջին լուրջ ու դասականացած ստեղծագործութիւններն են հայ իրականութեան մէջ:

Պէտք է նշել, որ մանուկներ ու յատկապէս պատանիներ, շատ յաճախ մաս կազմած են նաեւ Ժամանակաշրջանի Քրիստափոր Կարա-Մուրզաեան, Մակար Եկմալեանական եւ Կոմիտասեան պատարագներու երգեցողութեամբ դպրաց դասերուն:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական  
խորհրդի անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ  
Դ.Է. Մուրադյանը: